

կը Արելի արիւնին հետ : Բայց ճիշդ այս յուղիչ ճշմարտութիւններն է որ մեզի կ'ըսէ Ռոնի երէցը՝ նամակի մը մէջ, որուն ընթերցումն այսքան ուշացուցած ըլլալուս համար կը մեղադրեմ ինքինքս Մի՛ վախնաք սակայն որ անհամեստութիւնը ոււնենամ իմ կողմէս մէկ բառ իսկ աւելցնելու կարդալէ յիսոյ այդ նամակը՝ գեղեցիկ ու պարզ ինչպէս ամուր լրջագծով սոկի բաժակ մը :

ՈՒՆԻ ԵՐԵՑԻ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՈՇՄԸ ԱՌ
Ա. 20ՊԱՆԵՍՆ

Պարոն եւ սիրելի եղայրակից,
Հարկեցուցիչ հանդասանքեր զիս կը զըր-
կեն ձեր հաւաքոյթին մասնակցելու մեծ հա-
ճոյքին : Խորապէս կը ցաւիմ ատոր համար :
Հայաստանի դատը ինծի մասնաւրապէս սի-

րելի է սրբազն դատ մըն է ան : Զեր ցեղին մարտիրոսութիւննը ամենէն զարհուրելի դըր-
ուազներէն . մէկն է մարդկային կայրապու-
թեան : Անիկա եւրոպական ու ամերիկեան քա-
ղաքակրթութեան համար՝ աւելի է քան վիշտ
մը, խեճի խայթ մըն է : Ազատ մեծ ժողովուրդ-
ները գէշ կասարեցն իրենց պարտականու-
թիւնը հայերուն հանգէց : անոնք ձեզի լիա-
կատար հատուցում մը պարտական են :

Մեր յաղթանակին օրհնեալ ժամը պիտի
ըլլայ նաեւ, ատոր հաստատ յոյսն ունիմ, ձեր
տառապանքներուն վերջին ժամը . այդքան եր-
կար ատեն անբաններու տիրապետութեան տակ
հեծելչ յիսոյ, ձեր ցեղը պիտի ճանչնայ քաղցր
ծաղկափթթումները ազատութեան, արդարու-
թեան եւ գեղեցկութեան :

Բոլոր սրաով ձերդ
Փ. Հ. ՈՒՆԻ ԵՐԵՑ